ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՍԱՀԱԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱՇԱԿԵՐՏՅԱՆԻ

Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգը սրտի ցավով հայտնում է Դամասկոսի հայոց թեմի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սահակ ավագ քահանա Աշակերտյանի վախճանման լուրը:

Ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Արժանապատիվ Տեր Հոր վախճանման կապակցությամբ իր ցավակցությունն է հայտնել թեմի հոգևոր սպասավորներին՝ գլխավորությամբ առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Եփրեմ աբեղա Մարգայանի, թեմական վարչության անդամներին և հանգուցյալի հարազատներին:

Տ. Սահակ ավագ քահանա Աշակերտյանը ծնվել է 1920 թ.: 1974 թվականից սրանալով քահանայության աստիճան՝ շուրջ 30 տարիներ նվիրյալ իր ծառայությունն է բերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ որպես հոգևոր հովիվ Դամասկոսի հայոց թեմի Սուրբ Սարգիս եկեղեցու:

Խունկ և օրհնություն հանգուցյալի հիշատակին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ